Կրթահամալիրի դպրոց-պարտեզների ուսումնական պլանի համաձայն բնագիտությանը շաբաթական հատկացվում է 2 ժամ: Ուսումնական պլանի պարզաբանումներում գրված է. «Բնագիտության ուսուցումը կազմակերպվում է բնագիտական, բնապահպանական, բույսերի և կենդանիների խնամքի նախագծերի ձևով, ուսումնական ագարակում, լաբորատոր պայմաններում, փորձի հիման վրա»:

Սովորողի ընտրությամբ շաբաթական 4 ժամով՝ կենդանաբան-բուսաբանի, պարտիզպանի գործունեություն, բնագիտական-տեխնիկական ստեղծագործություն:

Սովորողներին ներկայացվող նախագծերի ուղղություններն են.

- պարտիզապուրակային գործունեություն.
- կենդանիների խնամք.
- բույսերի խնամք
- բնապահպանական նախագծեր.
- բնագիտական ֆիլմերի դիտում աստղացուցարանում.
- բնագիտական փորձերը
- Ջերմոց-լաբորատորիայի ստեղծում

Ուղղությունները ղեկավարում, աշխատանքը կազմակերպում են բնագիտության ուսուցիչները, կազմակերպիչը, ուսուցչի օգնականը:

Բանգիտության դասաժամին դասարանը բաժանվում է երկու կամ երեք խմբի: Յուրաքանչյուր խումբ զբաղվում է բնագիտության ուսուցչի կողմից նախօրոք հրապարակված նախագծով:Խմբերն ընթացքում փոխվում են:

Շամիրամ Պողոսյան